

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՄԱԲԱՐՔԱՌՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԱԶՄՄԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ

Համաբարբառի պատմությունն սկսվում է դարերի խորքից: Մատենագրության տվյալների համաձայն, առաջին համաբարբառը վերագրվում է երկրորդ դարի հեղինակ Տառխանոս Ասորուն: Չորս Ավետարանների համաբարբառը կազմելով՝ նա նպատակ է ունեցել գտնել Ավետարանների միջև եղած հակասությունները և վերացնել դրանք:

Չորրորդ դարի ասորի մատենագիր Եփրեմ խորի (կամ խորի) Ասորին մեկնում է Տառխանոսի համաբարբառը: Նրա մեկնությունը հինգերորդ դարում թարգմանվում է հայերեն և երկար ժամանակ օգտագործվում եկեղեցու կողմից:

Համաբարբառը բառը հայերենում ստացվել է ասորական «խառնել, խառնվել, միախառնում, համախառնում» իմաստով արմատի թարգմանությունից: Այդ բառը նախապես գործածվել է «համաձայն, միաբան, ներդաշնակ» և ապա՝ «համաձայնություն, համընկնում, ներդաշնակություն, համագրություն, ստադրություն» իմաստներով:

13-րդ դարից համաբարբառի պատմության մեջ սկսվում է նոր փուլ: Դա այն է, որ համաբարբառը կազմվում է բառարանային սկզբունքով, այսինքն՝ նրանում գլխաբառերը տրվում են այբբենական դասավորությամբ: Նման համաբարբառի հիմքը դնում է Փարիսի դոմինիկյան կարդինալ դե Սանկտ Կառո Վուգնը (1200—1263 թթ.): Նա 500 դոմինիկյան վանականների օգնությամբ 1262 թ. ավարտում է Աստվածաշնչի լատիներեն բնագրի համաբարբառը¹: Հետա-

գայում բոլոր երկրներում համաբարբառները կազմվում են այդ եղանակով:

Հայերը մինչև 18-րդ դարը օգտվում են թարգմանական համաբարբառներից, իսկ դրանից հետո սկսում են կազմել ինքնուրույն համաբարբառներ: Հայ անվանի քերական, տաղերգու Բաղդասար Դպիրը (1683—1768 թթ.) Կոստանդնուպոլսում 1753 թ. հրատարակում է իր «Ցանկ գիրք Նոր Կտակարանին» աշխատությունը, որով սկիզբ է դրվում հայ տպագիր համաբարբառներին: Դա 176 էջանոց մի աշխատանք է, որը պարունակում է շուրջ տասնուկես հազար բառ-վկայություն: Համաբարբառի նպատակը խիստ պարզ ու որոշակի է հեղինակին. «Առ ի դիտարկես գտանել զոր ինչ և խնդրից: Եթե բանս ի սուրբ Նոր Կտակարանին», գրում է նա համաբարբառի տիտղոսաթերթում:

Բառարանային եղանակով կազմված հայկական երկրորդ տպագիր համաբարբառը Ձմյուռնիայի 1848 թ. Նոր Կտակարանի համաբարբառն է: Կազմողի անունը թեև համաբարբառի վրա չի նշված, բայց Աստվածաշնչի աշխարհաբար բնագրի համաբարբառի հեղինակ Վահան Սահակյանը այն վերագրում է Դիոնեսիոս Վարդապետին:

Ձմյուռնիայի համաբարբառում հիմնականում տեղ են գտել չորս Ավետարաններում գործածված հիմնական խոսքի մասերին պատկաճող բառերը: Համաբարբառը տակավին չունի միասնական ու հստակ սկզբունքներ: Այսպես, օրինակ, բայերի համար որպես գլխաբառ է վերցվում անորոշ դերբայը՝ ներգործական և կրավորական սեռի բայերը ներկայացնելով միասին (անկանել, իլ, բազմել, բազմիլ—ասենք, որ այստեղ էլ

¹ Տե՛ս Բրոկհաուսի և Եֆրոնի հանրագիտական բառարանը, Ս. Պետերբուրգ, 1900 թ., հատոր 58, էջ 954 (տուներեն):

միասնություն չկա), բայց շատ հաճախ այդ սկզբունքը խախտվում է. օրինակ՝ անտանել և անտանիլ բայերը տրված են որպես առանձին գլխաբառեր: Որպես ինքնուրույն գլխաբառ է ներկայացվում նաև դիմավոր բայերի սահմանական եղանակի անցյալ կատարյալի (երբեմն էլ ստորադասական երկրորդ ապառնու) եպակի թվի երրորդ դեմքը. այսպես՝ բացաւ, բացցի, եքարձ, եքաց, եքեկ, եհատ, եհար, ետես, եցոյց, էանց և այլն: Բայց Ջնյունիայի համաբարբառի ամենամեծ թերությունն այն է, որ դրանում բերված վկայությունները շատ համառոտ են, երբեմն՝ կցկտուր: Այդ բանը ցույց տալու համար բերենք մի քանի օրինակ.

Աղամ (գլխաբառը տրվում է խորքից, փոքրատառերով. վերջում դրվում է վերջալետ):

Նուկ. Գ. 38: Որ Աղամայն...

Ա. Կորնթ. ԺԵ 22: Որպես Աղաման

45: Մարդն առաջին Աղամ... երկրորդ Ա Յուդ. 14: Եթե երրորդն լ'Աղամայ

Այնուամենայնիվ, մեր առաջին (մանավանդ Ջնյունիայի) համաբարբառների նշանակությունը շատ մեծ է, քանզի դրանք հիմք հանդիսացան նոր՝ ավելի կատարելագործված համաբարբառի համար: Այդպիսին եղավ Թադեոս վրդ. Աստվածատուրյանի կազմած Աստվածաշնչի համաբարբառը: Երուսաղեմի Արքեպ Վակոբյանց վանքի միաբան Թադեոս վրդ. Աստվածատուրյանը (1831—1906 թթ.) 1860—1867 թթ. կազմում է Աստվածաշնչի համաբարբառը, որը հրատարակվում է 1895 թ., Երուսաղեմում: Համաբարբառի թռաջաբանում աստվածաբանության դասատու քահանա Թորոս Տեր-Իսահակյան Ջուղայեցին գրում է համաբարբառի պատմության, կիրառության և նշանակության մասին: Նա նշում է, որ այդ համաբարբառի դերը մեծ է ոչ միայն աստվածաբանական, այլև լեզվական առումով, լեզվական առնչությունների, բառերի իմաստների և նրանց կիրառությունների ուսումնասիրության համար (էջ Թ):

Ինչ խոսք, Թ. Աստվածատուրյանի համաբարբառը հայկական նախորդ համաբարբառների համեմատ նոր որակ էր: Նախ՝ նրանում ընդգրկված է ամբողջ Աստվածաշունչը, և ապա՝ բերված վկայությունները ավելի ընդարձակ են, կազմման սկզբունքները՝ ավելի հստակ: Համաբարբառին կցած իր փոքրիկ առաջաբանում Աստվածատուրյանը թվարկում է ընդամենը յոթ սկզբունք: Ծանոթանալով այդ սկզբունքներին՝ պարզվում է, որ դրանցով ամենևին էլ չեն սահմանափակվում բոլորը: Աստվածատուրյանի նշած սկզբունքներն են՝ Աստուած և Տէր, Յիսուս և Քրիստոս կոյգերի համար որպես

գլխաբառ տրվում են առաջին բաղադրիչները, անունների համար՝ Դպակի ուղղականը, բայերի համար՝ անորոշ դերբայը, պարբերության սկզբում եղած եւ-ը անտեսվում է, աւ-ի փոխարեն գործածվում է օ-ն: Սկզբունքների մեջ ոչ մի խոսք չկա համաբարբառում Աստվածաշնչի բառերի ընդգրկման, վերցված վկայությունների ծավալի մասին, իսկ դրանք կարևոր սկզբունքներ են: Ասենք, որ սույն համաբարբառում ևս տեղ են գտել գոյականները, բայերը, և առանձին բառեր մյուս խոսքի մասերից: Այդ նշանակում է, որ այնտեղից բացակայում են դերանունները, շաղկապները, նախդիրները, մակբայների մի մասը, եղանակավորող բառերը, ձայնարկությունները, նույնիսկ ասել բայը: Բացի դրանից, բացակայում են որոշ բառերի վկայություններ: Այս համաբարբառում վերցված վկայությունները թեև համեմատաբար ընդարձակ են, բայց և այնպես դրանց մեծ մասը խիստ համառոտ է և առանց ստորոգման: Որպես օրինակ նորից վերցնենք Աղամ գլխաբառով մի երկու վկայություն.

ԱՂԱՄ (գլխաբառը տրվում է խորքից, գլխատառերով):

Մնն. Բ. 21. ...Թմբբութիւն ի վերայ Աղամայ Ա. Կորն. ԺԵ 45. Մարդն առաջին Աղամ ի շունչ

Իհարկե, ավելի ճիշտ կլիներ, եթե այդ նախադասությունների համար համապատասխանաբար վերցվեին «Եւ արկ Տէր Աստուած թմբբութիւն ի վերայ Աղամայ» և «Եղեւ մարդն առաջին Աղամ ի շունչ կենդանի» հատվածները:

Բայական հարադրությունների գլխաբառերը ներկայացնելիս հանդես են բերվում տարբեր սկզբունքներ, այսպես՝ ա) մի դեպքում հարադրությունները տրվում են հիմնական բաղադրիչի տակ, առանց գլխաբառում նշում անելու. օրինակ՝ արծանի գլխաբառի տակ կան արծանի է, արծանի առնել, արծանի առնուլ հարադրությունները: Բ) Որոշ դեպքերում գլխաբառի կողքին բերվում են նաև տվյալ բառով կազմված հարադրությունները. օրինակ՝ առաջ, ընդ առաջ. հեռի, հեռի առնել, հեռի լինել և այլն: Գ) Երբեմն էլ տվյալ բառով կազմված հարադրությունները ներկայացվում են որպես ինքնուրույն բառական միավորներ. օրինակ՝ ակն գլխաբառից բացի, կան նաև ակն ածել, ակն առնուլ, ակն արկանել, ակն դնել, ակն ունել կամ աղաղակ գլխաբառից բացի, կան նաև աղաղակ առնել, աղաղակ բառնալ և այլն: Մեր կարծիքով, այս սկզբունքներից ճիշտը երրորդն է:

Երբեմն հանդիպում ենք սխալների: Այսպես, օրինակ, ներգործական և կրավորա-

կան սեռի բայերը թեև ներկայացվում են որպես առանձին գլխաբառեր, բայց բաշխումը ճիշտ չի կատարվում: Կան **ամբարշտել**, **ամբարշտիլ** գլխաբառերը, բայց երկրորդի տակ են տրված **ամբարշտեցե**, **ամբարշտեցեր**, **ամբարշտեցին** ներգործական բայաձևերը, **անագանել**-ի տակ՝ ոչ **անագանեցի**, **անգոսնել**-ի տակ՝ **անգոսնեցա** կրավորաձևերը:

Առանձին դեպքերում ճիշտ չեն ներկայացվում բայի լծորդությունները. օրինակ՝ **արգելոյ** բայի **արգելոյ** հոլովաձևը տրված է **արգելախիլ**-ի տակ, **կիլոտ**, **կիլոտին** բայաձևերը՝ **կիլանել**, **կիլել** գլխաբառի տակ: **խօսիմ** բայը թեև գործածված է միայն կրավորական սեռի իմաստով, բայց գլխաբառը տրված է **խօսել** ձևով, **ականջք** գոյականի բոլոր կիրառությունները չնայած հոգնակիով են, բայց գլխաբառը տրված է եզակիով:

Ի տարբերություն Չմյուռնիայի համաբարբառի՝ դիմավոր բայերի անցյալ կատարյալ ժամանակի եզակի թվի երրորդ դեմքը ևս տալիս է անորոշի տակ, որը ճիշտ սկզբունք է: Թեև առանձնացված է եկ գոյականը, բայց գլխաբառը ներկայացված է **եկն** ձևով, որը ճիշտ չէ: Այսպես՝

ԵԿՆ

ՂԵԻՏ. ԻԴ 22. Իրաունք՝ մի և նոյն կացցեն Եկին

ԹԻԻՔ Թ. 14. Եթե յարեցի ի ձեզ Եկ ոք

Անտիս հոլովաձևը դնում է որպես **անտիք**-ին համարժեք գլխաբառ, որը գոնե Աստվածաշնչի համար ճիշտ չէ:

Հարադրությունները բերվում են ոչ թե բնագրում գործածված, այլ կապնողի կողմից ընդունված շարադասությամբ: Քանի որ հարադրության բաղադրիչները տրվում են իրենց տեղերում, ուրեմն ճիշտ կլինի հարադրությունը տալ այնպիսի շարադասությամբ, ինչպիսին հանդիպում է: Բայց, օրինակ, **տալ ածել** հարադրությունը Աստվածաշնչում գործածված է միայն այդ շարադասությամբ, բայց համաբարբառում տրված է **ածել տալ** ձևով:

Ասացինք, որ **Տեր**-ը տրվում է **Աստուած**, **Քրիստոս**-ը՝ **Յիսուս** գլխաբառերի տակ: Նկատի ունենալով, որ դրանք անենահաճախական բառերից են, խիստ դժվարանում է համաբարբառից օգտվողի գործը, որով հետև **Տեր** բառով վկայությունները գտնելու համար ևս պետք է կարդա **Աստուած** զըլխաբառի բոլոր նախադասությունները, այդպես էլ **Քրիստոս** բառի վկայությունները պետք է փնտրի **Յիսուս**-ի տակ:

Հայտնի է, որ Աստվածատուրյանի համաբարբառի յուրաքանչյուր էջը բաժանված է երեք սյունակի: Եթե վկայության վերջին բառը լուսանցքից անցնում է, ապա որտեղ

որ հասնում է, այնտեղ էլ կրճատվում է: Եվ շատ դեպքերում պարզելու համար, թե ինչ բառի հետ գործ ունես, պետք է դիմես բնագրին: Սա, իհարկե, կապնողի մեղքը չէ, այլ՝ հրատարակչի: Այսպես՝

ԱՁԳ

ԵԼՔ ԼԵ 34. Որդւոյ Աքիսամայ յազգէ դա. ԱՆԿԱՆԻԼ

ՆՆՆ. ԽԵ 14. Անկեալ ի վերայ պարանոցին քե.

ԱՁՏՈՒԹԻՒՆ

ՅԱԿ. Բ 12. Ազատութեան օրինօքն իցէք դատե. (կրճատումների ժամանակ դրվում է միջակետ):

Բացելով բնագիրը՝ պարզվում է, որ դրանք **Դանայ**, **Բենիամին**, **դատեղոց** բառերն են: Ընդ որում նման կամայական կրճատումները շատ-շատ են:

Այնուամենայնիվ, մեծ է եղել և է Թ. Աստվածատուրյանի կազմած Աստվածաշնչի համաբարբառի գիտական և գործնական նշանակությունը: Այսօր էլ այն օգտագործվում է և՛ եկեղեցականների, և՛ աշխարհականների կողմից: Տարբեր մասնագետներ (առաջին հերթին լեզվաբաններ) նրա հիման վրա կատարում են գիտական վանալան ուսումնասիրություններ: Բայց համաբարբառի դերը առանձնապես մեծ է հոգևորականների համար: Այդ մասին Վ. Սահակյանն իր համաբարբառի առաջաբանում գրում է. «Այս վերջինը (խոսքը Թ. Աստվածատուրյանի համաբարբառի մասին է—Ս. Թ.) հըսկա, մեծադիր հատոր մըն է, հոյակապ, կոթողական աշխատասիրություն մը, որ ներկայիս ալ գործածութեան մէջ է Հայոց Եկեղեցւոյ Դպրեվանքներուն մէջ»:

Բայց և այնպես հիշատակված և չհիշատակված մի շարք թերությունների պատճառով Թ. Աստվածատուրյանի համաբարբառը չի կարող բավարարել աշխարհականների և հոգևորականների այսօրվա պահանջները:

1963 թ. Բեյրութում լույս է տեսնում Վ. Սահակյանի համաբարբառը՝ «Համաբարբառ Սստուածաշունչ մատենի Հին և Նոր Կտակարանաց արդի աշխարհաբարով» վերնագրով: Հեղինակը Աստվածաշնչի աշխարհաբար տեքստի համաբարբառի անհրաժեշտությունը հիմնավորում է վերջին հարյուր տարում արևմտահայության կողմից Աստվածաշնչի աշխարհաբար բնագրից լայնորեն օգտվելու հանգամանքով: Ըստ նրան՝ համաբարբառի նպատակը մեր սուրբ-գրասեր ազգին ծառայություն մատուցելն է: Վ. Սահակյանի համաբարբառը իր կապնության սկզբունքներով նման է Թ. Աստվածատուրյանի համաբարբառին: Այդ մասին ևս գրում է. «Աստվածատուրեանի գրաբար Համաբար-

բառը հիմ եւ առաջնորդ եղաւ մեր աշխատասիրութեան» (էջ 7):

Վ. Սահակյանի համաբարբառը կազմված է հետևյալ հիմնական սկզբունքներով. ա) Այն ընդգրկում է ամբողջ Աստվածաշունչը: բ) Դրանում ևս հիմնականում տեղ են գտել հիմնական խոսքի մասերին պատկանող բառերը: գ) Ներգործական և կրավորական սեռերի բայերը տրված են միասին: դ) Գոյականի համար որպես գլխաբառ վերցված է եզակի ուղղականը: ե) Հատուկ անունների համաբարբառը տրված է առանձին (էջ 1113—1279): Ըստ որում բերված է բազմաթիվ հատուկ անունների ստուգաբանությունը, որը վերցված է «լատագոյն աղբյուրներէ» (էջ 1113):

Երբեմն նույն գլխաբառի տակ են տրվում տվյալ բառով կազմված բարդությունները: Բայց այդ սկզբունքը համաբարբառից օգտվողի համար այնքան էլ նպատակահարմար չէ. այսպես՝

ԴԺՈՒՐ—ԱԻ-ԻՆ-ՈՒԹԻՒՆ

ԴՊԻՐ—ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԴՐՕՇ—ԴՐՕՇԱԿ—ԴՐՕՇԱԿԱԿԻՐ

ՓՃՆԱՆԱ—ՑՆԵԼ և այլն:

Աշխարհի շատ ժողովուրդներ, զգալով համաբարբառի դերն ու նշանակությունը բանասիրական, լեզվական հետազոտությունների համար, Աստվածաշունչից բացի, կազմում են նաև մեծ գրողների, բանաստեղծների, փիլիսոփաների երկերի համաբարբառները: Համաբարբառ ունենալու խնդիրը մտահոգել է նաև հայ մտավորականներից և հոգևոր գործիչներից շատերին: Այս բնագավառում անուրանալի է Մխիթարյանների ծառայությունը: Նրանք, սկսած 19-րդ դարից մինչև մեր օրերը, կազմել են 5-րդ դարի հայ մատենագիրների, թարգմանականից՝ Ոսկեբերանի, Պողոսի, Ս. Բարսեղի, Եվսեբիոս Կեսարացու, Սեբերիանոսի և այլոց երկերի քարտարանը, իսկ Եզնիկ Կողբացու, Եղիշեի, Գրիգոր Նարեկացու և մի քանի այլ հեղինակների երկերը վերածել են համաբարբառների, որոնք, սակայն, մնացել են անտիպ:

1962 թ. ակադեմիկոս Ա. Դարիբյանի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ ՀՍՍՀ ԳԱ հիմնական գրադարանում բացվում է գրաբարի քարտարանի բաժինը, որն այժմ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմում է: Բաժինը քարտագրում է 5-րդ դարի հայ բոլոր և հետագա դարերից առանձին մատենագիրների երկերը: Հետագայում հեղինակային այդ քարտարանների հիման վրա իրականացվում է համաբարբառների շարային (սերիական) հրատարակությունը: Համաբարբառների ընդհանուր քանակը այժմը հասնում է չորս տասնյակի: Ըստ իրենց կազմման սկզբունքների՝ դրանք բաժանվում

են բառա-քերականական և բնագրային (տեքստուալ) տեսակների: Առաջին տեսակին են պատկանում Մ. Խորենացու (1969 թ.), Եղիշեի, Ղ. Փարպեցու (երկուսն էլ 1972 թ.) երկերի համաբարբառները: Եթե դրանցում տրվում են բոլոր բառերն իրենց կիրառություններով, ապա բնագրայինում բերվում են նաև բնագրային ընդարձակ վկայություններ: Բնագրային համաբարբառներից են Եզնիկ Կողբացու (1972 թ.), Կորյունի, Ագաթանգեղոսի, Փ. Բուպանդի, Եղիշեի, Ղ. Փարպեցու, Մ. Խորենացու, Գր. Նարեկացու, Հովհ. Դրասխանակերտցու և այլոց համաբարբառները: Դրանք իրենց կազմության հիմնական սկզբունքներով նման լինելով նախորդ (մասնավորապես Թ. Աստվածատուրյանի) համաբարբառներին՝ նրանցից նաև զգալապես տարբերվում են: Հիմնական տարբերություններն են՝ ա) ակադեմիայի հրատարակած համաբարբառներում ընդգրկված են հեղինակի գործածած բոլոր բառերն անխտիր և բ) բերված են բնագրային ընդարձակ վկայություններ: Իսկ այդ հատկանիշների հիման վրա հնարավոր է կատարել ոչ միայն գիտական պահպան հետազոտություններ, այլև նման համաբարբառները կարող են ծառայել նաև սկզբնաղբյուրի դեր:

Վերոհիշյալ բնագրային համաբարբառներն իրենց հերթին կարելի է բաժանել երկու ենթատեսակի՝ ա) համաբարբառների մեծ մասում թեքվող խոսքի մասերը, նախդիրները, նախադրությունները ներկայացվում են քերականական որոշակի դասավորությամբ, բ) մյուսներում հիշյալ բառերը տրվում են տվյալ գրքում գործածված էջերի հերթականությամբ: Մեր կարծիքով, նախընտրելին առաջին տեսակն է: Բայց, իհարկե, համաբարբառի օգուտը է՛լ ավելի մեծ կլինի, եթե նրանում կատարվի բառերի իմաստային դասակարգում:

Համաբարբառները, առանձնապես դրանց բնագրային տեսակը, լայն հնարավորություններ են ընձեռում ուսումնասիրելու ոչ միայն տվյալ հեղինակի լեզուն, այլ նաև բաղդատելու տարբեր հեղինակների ու տարբեր ժամանակաշրջանների լեզուները միմյանց հետ, հանգամանորեն բացահայտելու լեզվական առանձին շերտերը:

Համաբարբառը հարյուրավոր անգամ հեշտացնում ու ինտենսիվացնում է հետազոտողի աշխատանքը: Այս տեսակետից խիստ բնորոշ է հայագետ Հ. Անայանի կարծիքը համաբարբառի, որպես հետազոտության մեթոդի մասին. «Հայագիտությունը մեր օրերում, եթե ուզում է շարունակել իր զարգացման ընթացքը համաշխարհային մակարդակով, չի կարող անտեսել բանասիրական աշ-

խարհում կիրառվող ժամանակակից մեթոդները, որոնց թվում՝ հետապոտության համաբարբառային սեթողը: Հայ բանասիրության ամեն քայլափոխում իր առջև ծառացած է գտնում աղբյուրագիտական և բնագրաբանական խնդիրներ, որոնց արագ լուծմանը կարելի է հասնել միայն համաբարբառի օգնությամբ²:

Ծանոթանալով հայկական համաբարբառներին՝ իրենց հիացմունքն են արտահայտել բազմաթիվ հայագետներ՝ Էդմոնդ Շյուսո, Ջ. Բոյունիեյի, Ջ. Գրեպպին, Հ. Անասյան, Հ. Պ. Տեր-Պողոսյան և այլք: Պրոֆ. Է. Շյուսոն Հունգարիայի գիտությունների ակադեմիայի ժողովածուում անգլերեն հրատարակած իր հոդվածում³ շատ բարձր կարծիք է

հայտնում մեր համաբարբառների մասին: Հունգարացի հայագետը հոդվածի առաջին մասում անդրադառնում է հայ բարբառագրության պատմությանը, իսկ երկրորդում՝ հաճաբարբառներին: Նրա հիմնական եզրակացությունները հետևյալներն են՝ ա) համաբարբառները անգնահատելի ծառայություն են մատուցում ինչպես նույն հեղինակի, այնպես էլ տարբեր հեղինակների լեզվի և ոճի ուսումնասիրության գործում և բ) հայկական համաբարբառները օգտակար կարող են լինել ոչ միայն հայ ժողովրդի, այլև հարևան ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար:

Իբրև ընդհանուր եզրակացություն կարող ենք ասել, որ հեղինակային քարտարաններն ու համաբարբառները հարուստ գանձարան են ոչ միայն տարբեր տիպի գործնական աշխատանքներ, այլև բազմալիսի գիտական ուսումնասիրություններ կատարելու համար:

² Հ. Ս. Անասյան, Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը, «Էջմիածին» (ամսագիր), 1972, Բ, էջ 59:

³ «Acta Orientalia Academiae Scientiarum Hungaricae», Tomus XXIX (3), pp. 395–403 (1975).

